


✓ p  
282-283





1999





ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ



# ԱՆԱՊԱՏԻՆ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ

(Ա. ՀԱՏՈՐ)



ՏԵՏՐ ԵՐԿՐՈՐԴ



ԲՈՎԱՆԴՈՎՈՒԹՅԱՆ

- 1.— Վաղուան Գործք ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ
- 2.— Ծիծաղ (Սիլլի-Բրիւսով) ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿ. ԳՈՒՇԱԿԵԱՆ
- 3.— Մտերիմ Չայներ — Դիմակր ՓՐՈՑ. Յ. Ք. ԳԱՅԱԵԱՆ
- 4.— Սիրիկեի (Պաստուածք) ԱՐՍԷՆ-ԵՐԿԱՅ
- 5.— Արուեստի Յիշատակարաններն ու Պատերազմը ԿԱՐՈ ՊԱԼԵԱՆ
- 6.— Յուսպուս ՄԻԶՐԱՆ Յ. ԱԺՏԷՐԵԱՆ
- 7.— «Թիփփրերի» (Նորավեպ) ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ

ԳԱԶԻՐԷ, 1916

*h. 286.*

Տպագր. Զ. Ն. Պերպերեան



ԱՐՍԷՆ-ԵՐԿԱՅ

ԱՐԻԻՆՈՏ ՀԱՅԱՍՏԱՆ


ՈՂԲԵՐԳՈՒՅԻՆ, ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾ



ՄԱՅՈՒԱՆ ՈՒ ԿԱՐՈՏԻ ԵՐԳ



Տպւմբ. Զ. Պերպեխան





## ՎԱՂՈՒԱՆ ԳՈՐԾԸ

«Բայց այսօրուանը, պիտի յարեն գուցէ շատեր մեր պատուական ընթերցողներէն, միթէ լրացան ներկային մեզ պարտադրած ճիգերը, որ ապագայով մտահոգուելու ելեր էք:»

Վաղուան մասին մտածելը, նախ, չարգիլեր այսօրուան համար գործելէ:

Այսօրն ա՛յն է, արդէն, ինչ որ մեր թերացումներն ու դատաւրութիւնները շինեցին: Ան գրեթէ երէկի մը անյարիր մեռելութեամբը կը ներկայանայ այլեւս մեր գիտակցութեանը:

Բաներ մը կրնայինք գեռ փրկել կորուստի անոր անկուշտ ու համայնակուլ անդունդներուն երախէն: — Այս հարցը դրուած կը մնայ բոլոր անոնց տաջև որոնք միշտ աւիւն ունին վիճելու:

Բայց ստե՛ն է զգաստօրէն անգրագառնալու թէ մեծ սուգնապին հոգեբանական հրաշատեղծ բազէներն անցուցինք մենք ամլութեան ցուազին գալարումներով, կամ վիժուածքներու ամօթապարտ տաժանքովը: Եւ հիմա կրնանք՝ անդառնալիին ու անգարմանեղիին սգաստօրսու լուսթեան մէջէն՝ վազորդայնի հանգրուաններ որոնել, և անոնց հարկերն ու հնարաւորութիւններն սգեկօչել:

Արդարև, ժամը չէ՛ այլեւս ուշացած յորգորներու, ո՛չ ալ ապարդիւն աւազանքներու: — Թէ ի՛նչերու պէտք էր ընդունակ հանգիստնայինք ազգային ճակատագրական երկունքի այս շրջանին, և թէ ի՛նչպէս ապիկարօրէն, ապիրատօրէն վրիպեցանք, այդ յետագարձ հարցախուզութիւնը մեզ չի փորձեր հոս: Պատասխանատուութիւններու ճշդութիւն անողք խնամքը Պատմութեան կը թողունք որ գրական անգաստանէն ներս խաղաղ օրերու մշակ մըն է: Իսկ մենք, համեստօրէն, ջանադիր կ'ըլլանք սերտելու այն գասերն ու թելադրանքները, որոնք ցեղին գերագոյն ճգնաժամէն ընծայուելով անոր վաղուան վերականգնութիւն պայմանները կ'ազգարարեն:

Սխալ պիտի ըլլար աւարկել, թէ պարագաներն անձեռնառու են գրական այսպիսի կանխահոգ աշխատանքի մը համար: — Համեւրոպական տիտանամարտը, թէև անեցուն մոլեգնութեամբ կը շարունակուի, բայց վաղուց գաղթած է աշխարհացունց անակնկալներու, յեղակարճ գահավիժումներու և շանթահարիչ դիմա-



յեզուիթիւններու պակօւցումովը մեզ շնչատապա պահելէ, և երկուստեք յամաւօրէն անտեղիտալի մաքառումի մը բնոյթն է ստացած: Պայքարի հսկայական ծառայումներու մէջ իրենց բովանդակ կամքովն ու կորովներովը պրկուած ազգեր օրուան անմիջական պահանջներուն վրայ միայն չեն սեւեռեր իրենց անձկագին ուշադրութիւնը, այլ Պատերազմէն-Վերջի իրենց կանխատեսած կենսական խնդիրներովն ալ կը զբաղին, իրենց ներքին կեանքին վազուան կարգախօսները կը պատրաստեն, և իրենց ընկերային, քաղաքական, կրթական և այլ սիստէմներուն ու ըմբռնումներուն վերգնահատման ու վերայարգարման անձնատուր կ'ըլլան: Վէրաժօնի պարիսպներուն տակ, մահուան ու քանդումի ամենէն անեղ ուրականին կուրծք տուող Ֆրանսան այս միջոցիս իր Մայր-Ոստանէն մեզի կը զրկէ հատօրներ որոնց ընթերցումը մեր իմացականութիւնը կը լուսաւորէ՝ ներկայ անստուգութեան մասլ հորիզոններէն անդին աւելի յստակ տեսնելու համար այժմէն:


Ամենուս համար անփիճելի է թէ հայկական ուսումնադաշտին վրայ չի գիտցանք հզօր ազգակ մը ըլլալ ազգովին, և սկզբնական ամենի խանդավառումներէ յետոյ, լռելեայն համակերպեցանք տակաւ արտաքին բարեհաճ տրամադրութիւններէ ակնկալել լաւագոյն փոխարինութիւնը մեր կրաւորական վիթխարի ողջակէզին: Մտուգուած իրողութիւն է այսօր թէ Վասպուրականի ինքնուրոյն ձերբազատման փառանհոգ դրուագը չէր քայքայուիր, թէ Զէյթունը, Սասունը վայրապար չէին խորտակուիր՝ եթէ ինքնապաշտպան ու մարտական գործը գէթ անգամ մը, ա՛յս անգամ, համազգային թափով տարուած ըլլար:

Հիմա Յաղթանակը չազեւորեր մեզ երբ սաւառնաթեւ կը խոյանայ մեր հայրենի աւերներուն վրայ, և Էրզրումի, Մուշի, Բաղէշի ու Տրապիզոնի անկումները հայ հաւաքական գերեզմաններու վրայէն հսկայ տապանաքարերու թաւալման տպաւորութիւնը լսկ կ'ընեն մեզի...

Ժողովուրդ մը պատրանքներով ընդերկար կ'ապրուի, բայց անոնցմով չի կրնար վերապրիլ այսպիսի անուօր փորձանքներու: Լաւատեա հրապարակագրութեան մը ամբողջ հերարձակ ռեփօրիքը չի բաւեր արուեստականօրէն ստեղծելու այն զգացական ներուժութիւնները որոնք անհրաժեշտ են ամբօրինները դէպի նպատակ մը շարժելու և զանոնք զերծ կացուցանելու համար յուսալքման ու անբարոյացումի վտանգներէն:

Հայութիւնն այս պատերազմէն դուրս պիտի գայ կտարակուած, արիւնաքամ, թալթլուն: Բայց ինչ որ նոյնհետայն ամենաէա-

282-86





կան պայմանը պիտի ըլլայ իր վերածնունդին, իր Ֆիզիքական կազմութեան ու նիւթական ապահովումէն աւելի՝ հաւատքի ամրապինդ կռուանն է որուն վրայ պիտի կանգնի իր ներքին վերակազմութեան ամբողջ շէնքը, քաղաքական ինչ ուէժիմ ալ վերապահուած ըլլայ իրեն:

Վաղուան գործը՝ ազգային ինքնուրոյն մշակոյթի մը խտէալին շուրջ մեր ուժի բեկորներուն միացման, մեր արժէքներուն խըտացման, մեր ձեռներէցութիւններուն ներգաշնակման, մեր բարքերուն բիւրեղացման գիտակից աշխատանքը պիտի ըլլայ գերազանցապէս: Ու հայ մտաւորականութիւնն այժմէն կոչուած է այդ ուղղութեամբ լարելու իր ճիգերը: Դպրոցին, Մամուլին, Բեմին ու Արուեստին գործաւորներն են որ գերմարդկայնօրէն տանջուած այս ժողովուրդին պիտի սերցնեն, պիտի պտշտելի ընծայեն իր արիւնտա խաչը, որ Գողգոթայի ճամբուն ծայրը պիտի չի դադրի ըլլալէ անկորնչելի ուխտերու, նուիրական տւանդութիւններու խորհրդանշան մը:

Վաղուան գործը պիտի ըլլայ նաև մեր քաղաքացիական դատարարական ջերմեռանդ հոգը: — Պարտականութեան ու պատասխանատուութեան զգացումներուն հետ՝ պիտի ջանանք զարգացնել մեր ազգային կազմին մէջ ինչ որ ամենէն աւելի պակասեցաւ հոն, համերաշխութեան սգին: Միանգամ ընդ միշտ պիտի համոզուինք թէ իրենց ներքին պատակտումներէն հրաժարիլ չի գիտցող ժողովուրդները գատապարտուած են անհետ կորսուելու: Համերաշխութիւնը, վաղը, միջբասակարգային ու միջկուսակցական հարցի մը ձեւին տակ միայն պիտի չի ներկայանայ մեզի: Թրքահայութիւնը, գէթ իր հայրենի մեծագոյն սահմաններուն մէջ, արդէն իսկ կորսնցուցած իր երէկուան զատորոշ իմաստը, երկարաձգումը դարձած է Ռուսահայութեան: Վաղը, հայկական երկու զանգուածները պիտի համախառնուին ու հոգեխառնըին, և ազգային վարչական ծանրութեան կեդրոնը, աներկբայօրէն, կովկասին պիտի վիճակուի պարունակել Երկու մտաւորականութիւններ, չըսելու համար երկու մտայնութիւններ — ռուսահայն ու տաճկահայը — միեւնոյն սահմաններուն մէջ շքուելով, շքութուելով պիտի ընտելանան իրարու, պիտի ամբողջացնեն գիրար և նորագոյն ու աւելի կատարեալ ու հրապուրիչ տիպար մը պիտի կազմեն, թէ մին միւսը պիտի ձուլէ, հալեցնէ իր մէջ, առանց անկէ լաւագոյն բան մը իւրացնելու, պահելու:

Յամենայն դէպս Թրքահայ Արտասահմանը պէտք էր այժմէն դադրած ըլլար անհաղորդ, գրեթէ խորթ ապրելէ կովկասին հանդէպ, և հետամտէր տաճկահայ ու ռուսահայ ուժերու համասեռ



գործակցութիւնն ստեղծելու :

Վաղուան գործը՝ այս և ուրիշ տեսակէտներով՝ այսօրուան գործն է արդէն :

§

Քայց հարցում մը, իր ամբողջ անդոհական սաստկութեամբը, կը ցցուի, յանկարծ, մեր մտածումին մէջ .

— Ո՞վքեր պիտի ըլլան բանւորները վաղուան այդ ազգաշէն գործին...

Հոս, եզրպտահայ բարոյական նաւարկութեան մէջէն, գրական սա դիւրարեկ լաստին վրայ, երէց ու կրտսեր եղբայրակիցներ քովքովի կծկտած ստեին խոկ, միթէ չե՞նք տեսներ ինքն իր մէջ ուժացած, խրամատուած մտաւորականութեան մը արտաքցնող, վհատեցուցիչ պատկերը :

Քաղաքականութիւնը լղրճեր, թուճաւորեր, այլանդակեր է ամենէն մաքուր ու արգաւանդ համակրութիւնները :

Ու արտասանմանեան հեռուները չեն ընծայեր մեզի աւելի սրտապնդող ու յուսադրիչ երեւոյթներ :

Ամերիկահայը ազաքներու ձեռքն է մնացիր, տարիքով տղաքներու՝ ինչպէս և խոշոր անուղղայ ազաքներու :

Կովկասէն համառ ձայները չեն յագեցներ մեզի : Շնչատ, հեւասպառ, հատկտուր բան մը ունին անոնք, ազգային խմորումի մեծ կռուանին անհամապատասխան հմայք մը, հայ ոգորումներու գլխաւոր թատերաբեմին անհամեմատ կշռոյթ մը, որ կը ջլազրգուէ ու կը տառապեցնէ մեզի :

Հապա ի՞նչ դժնդակ բօթեր, ի՞նչ ահաւոր ստուգութիւններ մեզ կը վերապահէ վաղը... Մտաւորական անփոխարինելի կորուստներ, որոնց ամբողջ արհաւիրքը դեռ չենք զգար բաւական ուժգնօրէն, վասնզի տակաւին չենք յուսահատիր յուսալէ, տակաւին հոգեւէին կ'անձկանք՝ տարագրութեան ու մարտիրոսացումի ճամբէն ուրուականային, այլ սխրալի վերագարձներու... Անո՛ւն մը միայն տալու, մէ՛կը միայն յիշելու համար մեր ահնգէտ սպասած ջահակիրնեւէն, կրնա՞նք համակերպիլ վարուժանի մը խոպառ շիջուձին, վարուժանի մը՝ որուն տաղանդին ցուքերը դեռ երէկ եղերական գեղեցկութեամբ մը կը հագուեցնէին Հայաստանին արիւնջլուայ մերկութիւնը յաչա ֆրանսական ընտրանիին, և որ պիտի կրնար վաղը նոր թուիչքներ տալ սարուածակորոյս Հայ Հոգիին, անոր մէջ արթնցնելով անպարտելի կոչումներու սարսուռը, անոր վրայ նետելով ինքնալստահ հպարտութեան ծիրանէփառ քղամիդներ... :

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՒԵԱՆ



## Ծ Ի Ծ Ա Ղ

### (ՍԻՒԼԼԻ-ԲՐԻՒՏՕՄ)

Անասունք, որոնք չունին երբեք վսեմ անդեհներ,  
Կը քալեն՝ ծնած օրերնէն՝ միշտ իրենց յօնքը պոքսած.  
Ու այդ ծայրը խոժոռ, մինչեւ իրենց ժամն յետին,  
Նշան խորհրդաւոր իմաստութեան՝ կը մնայ հոն.  
Ամեհի առիւծներն, որ կը յածին մեծաքայլ,  
Ազատ՝ ամենազօր, խորճովն չե՛ն պարզեր բնաւ.  
Արծիւներն, կապոյտի՝ օդի զակներ, լուրջ են միշտ :  
Իսկ մարդերն, որք կ'ընթանան բիւր խոչերէ արիւնջուայ,  
Հանոյքին պարաւանդուած, պարտադրութեանց շղթայուած,  
Ըստխալուած՝ միշտ փնտելու, ու չգիտնալու եւ ոչինչ,  
Ոչինչը բսանալու, առանց գնելու՝ ծախելու,  
Զը սալու իրարմէ խոյս, ու չմտեղո՛ւ ալ միմեանց,  
Մահէն զանգիտելու եւ արտեհին քրքրելու,  
Մարդերն ունին ծիծաղ մը չարաւուհի ու սքիսմար :  
Գեղեցիկ է ծիծաղն ալ հրհուանքին պէս անտուտ,  
Երբ անմեղ է անոր պէս՝ լուսանաճանչ անոր նման :  
Աղածի՛ մանուկներ, առիւ աննենց իղձերով,  
Որ կը հրէք ձեռնովն ձեր խանձարուրքն՝ որ բըռնէք  
Գոյները փարփառ, այդ խաբկանքներն երեւունք,  
Դուք կըրնա՛ք դրօշներուն ի տես ինչպէս վարդերունք,  
Դուք, որոնց համար կարմիր մ'է սակաւին այս ամէնք,  
Արձակել քրքուն ծիծաղ մ'որ հախրանքի ունի ձայն.  
Եւ դուք, ա՛լ անտառ նախնիք, որ չգիտէիք ընթերցուլ,  
Եւ չէիք կրնար գիտնալ քե՛ սիեզերքի միւս ծայրն  
Կը գործուին ի՛նչ ոնիրներ ու կը կըրուին ի՛նչ ցաւեր :  
Երբ ժանտախար հեռանար պատերազմի մարդոց հետ,  
Սոսկումի եւ արցունքի վախճան՝ եր այդ ձեզ համար.  
Ու գուցէ մոռնալով այդ հեռացած աղէտներն,  
Իրկուններ կ'ունենայիք զուարթ՝ առտուններ ցընծալից.  
Բայց մենք, զորս աշխարհի ամբողջ հոգերն կը խրտեն,  
Ամեն օր կը տառապինք ճիւղերսկան միտերով,



Ձի ամբողջ երկրի վերայ պատգամաբեր մը ներբին  
 Թելով մը կը զօդէ բոլոր ցաւերն ու սիրերն:  
 Այս, հիմակ ա՛լ մոռացումն անկարելի է մեզի:  
 Միքէ հնա՞ր է ունենալ հոգի մ'ա՛յնման անըզգայ,  
 Որ առանց սարսուարու լսէ ամեն կողմերէ  
 Խուժող բօքն աղէտներու՝ բռնաբարմունքն օրէնքի:  
 Տերերն՝ աւելի՛ խ՛ստ, աւելի նուաստ հոգիներն,  
 Անանուն անգրութիւն քաղաքային քանջանքի,  
 Գաշիններ դրժուած, ռազմ, վիրաւոր մարտիկներ  
 Ռոնք ա՛յս գիշեր դեռ կը հորնդային խրամին մօտ.  
 Պատիւ եւ իրաւունք քոյլ կամներէ մասնուած,  
 Ու Քրիստոս զարհուրած իր խօսքերուն արդիւնքէն,  
 Գլուխը քազ մը դրած եւ ձեռնով սուրբ բռնած,  
 Չը գիտէր կը փրկէ՞ քէ կը կորսնցնէ մարդկութիւնն.  
 Միքէ չէ՞ զարմանալի որ դեռ կըրնանք ծիծալիլ:

9 Ապրիլ 1916  
 Աղեփանդրիա

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ



## Մ Տ Ե Ր Ի Մ Ձ Ա Յ Ն Ե Ր

### Դ Ե Մ Ա Ա Ը

Քարեկենդանի վայել նիւթ մը. չէ՞, Բայց միթէ Քարեկեն-  
 դանի առիթո՞վ միայն դիմակ կը կրեն մարդիկ, թէ ոչ տարին  
 տասներկու ամիս բարեկենդան ընողներ, հետեւաբար և դիմակ  
 կրողներ, անպակաս են ամէն տեղ:

Շորենհառուեր իր խորաթափանց սրտատեսութեամբ զիտել  
 կուտայ թէ, մարդիկ տարին մէ՛կ օր միայն, Քարեկենդանին,  
 անկեղծութիւնը կ'ունենան իրենց դիմակները ցուցնելու. իսկ  
 տարուան մնացած օրերը ճարտարօրէն կը պարտկին դանտնք:

Դիմակին պատմութիւնը խիստ հաւանօրէն մարդուն գէմքին  
 չամբ հին է: Քաղաքակիրթ ազգերու լեզուներուն մէջ չիկայ հաս  
 մը՝ որ իր բառազանձին մէջ չթուէ այս բառը, ոչ ալ գէմք մը՝  
 որ ապաստանած չըլլայ անոր շուքին տակ:

Գիտականօրէն խօսելով ինքնապաշտպանութեան հարկն է որ



կեղեւով, մորթով, թագանթով, պարուտակով կամ մաշկով (մաշկ-  
masque?) կը պատէ կենդանական և բուսական գործարանները :  
Դիմակն ալ հարկին ծնունդն է արդեօք :

Հասարակ առումով, սակայն, գիմակին և մորթին, կեղեւին  
կամ մաշկին միջև կեցած խտիրը չափազանց ակներև է . առա-  
ջինը կը ծառայէ տեղութիւն մը ծածկելով բարեմասնութիւն մը  
կեղծելու, մինչդեռ միւսները կը ծառայեն կեանք մը կամ անոր  
կորիզը պահպանելու :

Ուշագրտւ չէ՞ք գտներ բնագրական հնարքը գեանառիւծին  
(caméléon) որ, երբ իր կեանքին սպառնացող վտանգի մը գիմաց  
գտնուի, անմիջապէս իր ներքև կամ մօտը գտնուած առարկային  
գոյնը կ'առնէ, և այսպէս յաճախ կը յաջողի խաբել թշնամիին  
ուշագրութիւնը և ազատել իր կեանքը :

Որքան է արդեօք թիւը երկուտանի գեանառիւծներուն, ու-  
րոնք Շահի բաղինին առջև կ'ընդգծին, հողին ու ցիխին գոյնը  
կ'առնեն, բարձրուի ձեւը կ'իւրացնեն, խունկ ու մամ կը դառ-  
նան, շիտակութիւն կը կեղծեն, կը սրբանան և կը ժպտին նոյն  
խակ կեղծիքը խարանել :

Որքան ստեպ կը հանգիպիս բազմազիմակ անբարոյական  
ախպերու՝ որոնք հասարակ վրիպանքներդ կը ձաղկեն անխնայ,  
գծուծներու՝ որոնք այսօր վեհանձնութիւն կը քարոզեն ու վազը  
գնդասեղի հարուածի մը դէմ թնդանօթով կը զինուին . խենեշ-  
ներու, վաւաշտաներու՝ որոնք շնականօրէն մաքուր բարքերու  
անունով կը բարբառին :

Դիմակավաճառի մը ցուցափեղկերը գիտած էք երբեք . մար-  
դիկ ի՞նչ անհատնում ջանքեր կը թափեն՝ կարելի եղածին չափ  
այլանդակ և անտիպօրէն ծիծաղաշարժ գիմակներ ստեղծելու,  
մեր քրքիջները և դրամները կորզելու համար :

Կեղծիքի դիմակներն ալ, խիտ ալլազան և չափազանց  
բարդ ու բազմաթերթ, թէև հակառակ պաշտօն մը ունենալ կ'են-  
թադրուին, այսինքն՝ շտրհք, դարգացում և առաքինութիւններ  
կեղծել կը նկրտին, բայց դարձեալ սրատես աչքերու համար չեն  
դադրիր նոյնքան այլանդակ և ծիծաղաշարժ ըլլալէ :

Բարքերու, կիրքերու և մակերեսային առաքինութիւններու  
անսոքք վերլուծում մը պիտի, ապահովաբար, շատ բան կորսն-  
ցնել տայ անոնց հուշակուած արժէքներէն, միտմաներու եր-  
կիւղած զմայլանքին առարկայ դարձող հմայքներէն : Սկսինք :

Ի՞նչ է Սէլըլ — «Հոգիին կեանքը», պիտի ըսէր Լամառթին .  
«Մեր կեանքին առանցքը», պիտի գոչէր ուրիշ մը . «Կեանքի ա-  
նապատին մէջ սխախտ մը», պիտի յարէր երրորդ մը . վերջապէս՝



սրբութեան բեկոր մը, երկնային կայծ մը, գեղեցկութեանց համադրումը են :

Եթէ սէրը ոսկիին կերտան ունենար՝ վերև սահմանուածը՝ 24 կերտաթի, անխարդախ, ախար սէրը պիտի ըլլար, որուն առջև, որքան ալ ցանցատ, երկիւղածօրէն խոնարհիլ միայն պարտինք : — Հիմա տեսնենք գիմակաւոր, խարդախուած սէրը :

Գիմակաւոր սիրոյ բազկացուցիչ տարերքն են՝ 1) Տկարութիւն. տկարը միշտ կռթնելիք տեղ մը, անձ մը կը փնտռէ. զօրաւորներն են որ առելէ և առելի ըլլալէ չեն վախնար : 2) Մնաքաւութիւն. կը սիրեն որպէս զի փառասրբութիւն : 3) Նիւթական շահ. մեկնութիւն հա՞րկ է : 4) Բանաստեղծական աւելն. ամէն սիրող գերազանցօրէն կը բարձրացնէ իր սիրոյ առարկան, և հաճոյքով անձնատուր կ'ըլլայ այս ինքնախարութեան : 5) Սեռը յաւերժացնելու բնագոյ՝ եթէ խնդիրը ամուսնական սիրոյ վրայ է : Ամուսնական ամենամաքուր սէրն իսկ երբեք չի դադրիր այս բնագոյին իրբև գիմակ ծառայելէ :

Մանուկը իր մայրը կը սիրէ՞ : — Ձեռ գիտեր : Մայրերուն սիրտը թունդ չեղէ : Գիտեմ միայն թէ տղան իր գոյութեան պահպանումին բնագոյն մղուած՝ սկիզբները կը սիրէ մօրը ոչ թէ անձը, այլ կաթը, հաճոյք կը զգայ անոր զգուսնքներէն. երկու պարագային մէջ ալ հասպաշտական է իր սէրը. գիտակից, պատասխանող սէրը վերջէն ծայր պիտի ապ հարկաւ :

Մայրական սիրոյ սրբութեան, վեհութեան, հրաշալիութեան վրայ ո՞վ պիտի ժպրհէր կասկածի ստուեր մը ձգել : Բայց չէ՞ք կարծեր որ կնաջական տկարութիւնը, որ մը իր զաւկին բազկին կռթնելու ենթադրատակցական խորհուրդը և ուրիշ հասպաշտական նկատումներ, ու մանաւանդ սեռին պահպանումին թաքուն բայց արթուն բնագոյ իրենց որոշ բաժինն ունեցած ըլլան անոր սիրոյն մէջ : Անտարակոյտ :

Ճշմարիտ հայրենասիրութեան և մաքուր ազգասիրութեան առջև պատկառ կենալով հանդերձ՝ չպիտի յամենայինք յայտնել թէ՛ այս մարդին մէջ մանաւանդ անպատկառօրէն կը վիտան գիմակաւորներու լէզէսններ, առնալաճախ յատուկ խայտարղէտ երանգներով և հապիտի վայել թափանցիկ նկարագրով ու շարժուձևերով, ուր ծիծաղելին ու նողկալին զիրար կը գլին փոխն ի փոխ :

Համաճայնինք որ չտկերտով ազգասիրութիւնը ամենէն հասութեաբեր կալուածն է. անիկա կ'ապահովէ իր գիմակաւոր ենթակային համբաւ մը՝ քաղցրահնչիւն, գիրք մը՝ նախանձելի, խնամխտական հաշիւներ, հեռաւոր կամ մօտաւոր շահեր՝ ոչ խո-



տելի, վերջապէս խել մը իրաւունքներ՝ իբրև թէ մուրհակաւոր :

Մեծ ազդերու մէջ, մանաւանդ ներկայ պատերազմէն առաջ, տարին անգամ մը հազիւ պիտի հանդիպէիր ազգասիրութիւն բառին գործածութեան. անոնք այս վսեմ հիւանդութեան նսպաներէն վաղուց ազատուած կ'երևին. անոնց մօտ պարտականութեան պարզ կատարում մը փոզահարելի գիւցազնութիւն մը չի սեպուիր. չէ՞ որ ազգին հանգէպ իր պարտականութիւնը կատարելը անշքան բնական է որքան շնչառութեան գործողութիւնը. կեանքը, ու է ձեռի տակ, ասնել և տալ մըն է :

Մեր մէջ այնպէս չէ, մարդիկ կան որ ամէն գնով ազգասէր երեւնալ, նոյնիսկ ըլլալ կ'ուզեն. և ատով ալ չեն բաւականանար՝ մանաւոր մարմաջ մը կը զգան փրկիչներ ըլլալու, անմահանալու : Այս հիւանդութիւնը տանն մը այն աստիճան անաւոր համաճարակի մը վրդովիչ երեւոյթն ատած էր որ, մենք, խեղճ ազգին մէջ, փրկելիներու թիւէն աւելի փրկիչներ անհնելու գատապարտուած էինք : Փրկիչ դրկուելիք փրկիչներ. չէ՞ :

Կայ դասակարգ մըն ալ որ իր ազգը կը սիրէ իր քմայքին, անձնական հաճոյքին համար, ինչպէս մանուկը իր պուպրիկը և ծխամալն իր հուզան (կկլաղ) : Այս մտլութիւնն է որ մեր մէջ ստեղծած է յատկանշական բառ մը — ազգայինք : Հուզայամուլը իր քմայքին համար ամէն օր սրոյ գոհոյթութիւն մը կ'ընէ սիրով. իսկ ազգայինքին խօսքէն անդին չանցնիր, ձեռքը գրպանը տանելու շտրհալի փորձութեան մէջ չի յարս : Դիմակաւոր մըն ալ ան :

Ինչ է գութը : Գութը առաքինութիւններուն մէջ այն տեղը կը գրուէ ինչ որ շուշանը ծաղիկներուն մէջ, կամ սիրաբ մարդկային մարմինին գործարաններուն մէջ : Անոր հիմքը կը կազմեն անարատ այլասիրութիւն և թշուառութեան հանգէպ խարապէս սրացաւ վերաբերում մը, անոր ամօքումին կամ բարձումին համար գոհաբերելու յօժար կամքով մը կցորդուած :

Դիմակաւոր գութը, սակայն, մինչև այս մաքուր ոլորտները չի կրնար թեւակոխել : Եթէ խիստ փորձի քուրային ենթարկենք մեր գութը կամ բարեգործութիւնները, անոնց մէկ զօրաւոր տուկոտին շարժատիթը պիտի գանհնք՝ ետասիրութիւն, անախառութիւն, ծուլութիւն, արժանապատուութեան պակաս, ազիտութիւն ևն :

Բացասականք : Ազգատի մը ոգորմութիւն կուտաս՝ թերեւս պարզապէս, ետասերարար, սիրազ խշխշանքէ ազատելու, խիղճկ կաշառելու ու խոսվում հանգիստ տեղը բերելու համար : Սընախառութեան փորձութիւնը աւելի մեծ է, և մենք Հայերս :



բեմական ու լրագրական անհարկի տարփողեաններով մասնաւոր ճիգեր կը թափենք «բարերարացուներուն» այդ բնազդը մշակելու, հրահրելու: Ծուլութեան հետեւանք է՝ թշուառութիւնը պատասմը հասցով խաբելու փորձը. ս'ի պիտի յօժարէր իր անձն ու գանձը տրամադրել թշուառութեան դէմ մղուելիք վիթխարի պայքարին: Եւ միթէ մարդկային արժանապատուութեան հոկառակ գործ չէ՞ թոյլ տալ՝ որ մեր նմաններուն թշուառութիւնը յաւերժանայ և ընկերային աղէտի մը հանգամանքն ստանայ՝ մեր տգիտութեան երեսէն, սպառնալով խաթարել ընկերութեան կարգն ու սարքը: — Ինչպէս անառակը կը պատժենք՝ միւս անգամ պատժելու տխուր հարկին տակ չզանուելու համար, նոյնպէս պարտինք գլխաւ ա՛յնքան լաւ՝ որ ա՛լ կարիք չի մնայ միւս անգամ ողորմելու: Մարդկային ընկերութիւնը իր հաւասարակշռութիւնը ա՛յն տանն գտած կ'ըլլայ՝ երբ ողորմելիներ և ողորմաններ այլեւս գոյութիւն չունենան: Գութը, որ հիմնուած է մարդկային անկումներու և վրատակներու վրայ, իր դերը պէտք է ապրած, աւարտած ըլլայ:

Ի՞նչ է քաջութիւնը, դաբրէ ի վեր դիւցազներգուած, փառաբանուած, անմահացուած: Պիտի սիրէինք գտասկան յորջորջել այն քաջութիւնը որ՝ ընդհանուրին բարօրութեան իրձէն ծագում առած՝ դիտէ անպայմանօրէն և անշահախնդրաբար դիմագրաւել ամէն վտանգի, նոյնիսկ մահուան: Հին քաջերուն խնկելի յիշատակը և նոր հերոսներուն զմայլելի խոյանքն է որ քիչ մը վեր կը բռնեն մարդկութեան ինկած վարկը, որոշ չափով հրապար մը ընծայելով մեր այլապէս տափակ կեանքին: Իսկ մե՞ր մէջ. —

Քաղոքիւնը պարսնք մ'է լոկ,  
Զոր կը ծախեն խեղճն ու խելօք:

Այլասերած քաջութիւնը դիմակ մըն է միայն, որուն տակ պիտի գտնէք՝ զօրաւոր քանակութեամբ... երկիւզ, (վախկոտ շուններն են որ կը փութկոտին հաջելու և յարձակելու,) բաւական հաշիւ՝ խնամքով քողարկուած, քիչ շատ սնափառութիւն, մաս մը տգիտութիւն, փշուր մը ձանձրոյթ կեանքէ և պողուկնց մըն ալ խենթութիւն՝ կուռագանութեամբ համեմուած:

Տարօրինակ կերպով կեղծ ժամանակներու մէջ կ'ապրինք. գոյներ, մազեր, ակռաներ՝ կեղծ. աչքեր, բերան, իրան՝ կեղծ. լեզու, սիրտ, ժպիտ՝ կեղծ. հառաչքներ, արցունքներ՝ կեղծ. բարքեր ու արժանիքներ՝ կեղծ: Սէր, գութ, ազգասիրութիւն, քաջութիւն, սկզբունք, կրօնք, և դեռ ինչն'ր՝ մերթ միաթերթ, յաճախ բազմաթերթ դիմակներու կը վերածուին, թաքցնելու համար ապիկարութիւններ, յետին մտքեր, նողկալի հաշիւներ,



ճիւղաղային բնագոյններ: Մինչև անգամ, կարծես, պարտադրել կ'ուզուի գիմակը: Վճիտ, անգիմակ անկեղծութիւնը կոչուութիւն կը սեպուի. մաքուր անձնութիւնը խենթութիւն կը համարուի. ճակատաբաց գաղափարի պայքարը անհետատեսութիւն կը կոչուի. իսկ անկաշառ նկարագրին ճակտին կը փակցնեն «ապուշ» մակդիրը: Այո՛, կը պահանջուի գիմակ մը՝ տան մէջ, գիմակ մը կամ տասնեակ մը՝ ընկերութեան զանազան շրջանակներուն մէջ. գիմակ մը՝ ինչպէս առանձին հագուստ մը՝ կիրականօրեայ, գիմակներ, վերջապէս, շուկայի մէջ և ամէն կողմ: Աշխարհի խելացիները քեզի պիտի ըսեն թէ՛ «չորս ծայրը իրար բերելու» կամ «Ղուբին երեսը մնալ կարենալու համար» ստիպուած ես հարիւր կտոր ըլլալ, հարիւր կազապարի մէջ մտնել, «ճկուն» ըլլալ, «գործի մարդ» զտանալ, մէկ խօսքով կատարեալ աճպարար մը, չէ՞...

Ո՞ւր պիտի երթայ այս երկար Բարեկենդանին վախճանը: — Կրթութիւն տարածելու է — պիտի խորհին բարի հոգիներ... Կրթութիւն — Բայց չէ՞ք մտածեր որ ա՛յ ալ, երբ նկարագրին կեցումը շունենայ իրեն նպասակ, գիմակներուն ամենավտանգաւորը կրնայ դառնալ... ու միթէ չի՞ր դառնար կոր արդէն:

- Ուրեմն, ո՞ր ատեն անգիմակ են մարդիկ:
- 1) Երբ նկարագրի բնատուր անկեղծութիւնն ունին:
  - 2) Երբ յոռի դաստիարակութեան մը «չորհրդէն» զերծ բոլորովին անտաշ են:
  - 3) Երբ խոր վիշտի և մեծ յուսահատութեան մատնուած են:
  - 4) Երբ իրարու դէմ կը դաւեն, կամ խաղի մէջ՝ առիթը չեն փակցնէր զիրար խաբելու: Կ'ըսուի թէ Մեծն Նարուէնն թղթախաղի մէջ շատ փոքրօգի էր:
  - 5) Երբ հաշուական սեղանին առջև՝ Մամոնային կը խնկարկեն ջերմեռանդօրէն:
  - 6) Երբ իրարու հետ կը կռուին, զիրար կը նախատեն, ի յայտ բերելով կրթութեան սնդոյրին տակ ծածկուած վայրագ, բայց մարդկային բնագոյններ:
  - 7) Երբ հայելիին գիմաց, կամ չորս պատին մէջ մինակ՝ իրենց անձին հետ կը խօսին մէկ վայրկեան...
  - 8) Երբ հայրենիքին սեղանին վրայ իրենց անձը կամ գանձը կը զահարերեն անպայման կերպով:
  - 9) Երբ թշնամիին անկուսին վրայ կուռ կուշտ կը հրճուին: Կեանքը պիտի գազրէր գիմակաւոր պարահանդէս մը ըլլալէ՛ երբ մարդիկ գիմակաւորուելու բովանդակ հնարամտութիւնն ու ճշակտոր ջանքերը նուիրէին իրենց ձիրքերուն մշակոյթին ու բարքերուն արնուացումին: Մեր օրերուն դէպի Բնութիւն վերագործի հասանքը իցիւ թէ բարենշան սկզբնաւորութիւն մ'ըլլար դէպի Բնակեանք վերադարձին:

Յ. Թ. ԳԱՅԱՆԼՆ



## Մ Ի Ր Ք Է Ճ Ի

(Պ Ա Տ Մ Ո Ւ Ա Վ Ք)

Տրապիզոնցի էր Պետրոս: Տարտանէլը պաշտպանող օսման-  
հան բանակին մէջ կը գտնուէր ան: Երկու տեղէ վերաւոր ծան-  
րապէս, կուրծքէն ու գլխէն, կետամեռ, բերած էին զայն Պոլիս,  
հիւանդանոցը: Իր ընկերներուն մէջ միակ Հայն էր ան որուն  
կեանքը ճակատագրին մէկ խաղովը գուցէ, անտես առնուած էր:

Պետրոսին վերքերը հետզհետէ կը լաւանային, ու նոր կեան-  
քի մը բուռն տենջանքն անոր երակները կը լեցնէր:

Հիւանդանոցը Միքքէճիի մէկ պանդոկին վերնայարկն էր,  
խոնաւ ու մթին տեղ մը, որուն միօրինակ ու սե պատուհանները  
կը բացուէին բակի մը վրայ՝ տխուր ու ամայի տեսարան մը  
պարզելով գիտողին աչքերուն: Դիմացը կար ուրիշ պանդոկ մը  
Ջուարճութեան տուն մը կը թուէր անիկա: Ամէն գիշեր վաւա-  
շտ բացապանչութիւններ ու գինովի երգեր կը լսուէին անկէ:

Պետրոսին հետ ընկերներն ալ կ'ապաքինէին: Դատապար-  
տըւածները մեռած էին արդէն, ու վերապրողները կը շնչէին  
կեանքը լայն շունչով մը, կարօտագին: Միեւնոյն սենեակին մէջ  
վեց հոգի էին անոնք:

Գիշեր մը, երբ ամրոցը Պոլիսը կը քնանար, Պետրոսին ըն-  
կերները որոշեցին երթալ հոն, գլմացը, այն տխուր ու սե  
պանդոկը՝ կեանքը մտնալու համար զուարճութեան աղջիկներուն  
գրկին մէջ:

Պետրոսը նայեցաւ ձեռքի մատանիին, ու տեսաւ իր սրտին  
մէջ պատկեր մը, որուն յիշատակին առջև դողաց:

— Ես չեմ գար ձեզի հետ, ըսաւ ան, կարողութիւն չու-  
նիմ:

Բայց ընկերները բարկացան, և սպառնացան այդ կեփոսին  
որ կը համարձակէր իրենց ուզածը չընելու:

Պետրոս համակերպեցաւ: Հետեւեցաւ անոնց, դողողուն  
քայլերով:

Փողոցին մէջ մուսլ գիշեր մը կար, թանձր և աղտոտ գիշեր  
մը: Բաղաքին վրայ բարակ անձրև մը կը մաղուէր, միօրինակ և  
տխուր աղմուկով: Անօթի շուն մը կը կաղկանձէր քայլ մը անդին,



պատին տակ :

Դիմացը, պանդոկին մէկ պատուհանէն, ազօտալոյս ճրագի մը կարծիր ու պզտոր արցունքը կ'իյնար ցեխին մէջ :

Ընկերները կ'երթային առջեւէն : Պետրոս խորհեցաւ փախչիլ, փախչիլ արագավազ այդ գոիհէն, երթալ հեռուն, մինչև իր մեռած հայրենիքին աւերակը, և անոր արիւնլուայ մոխրին մէջ իր սիրտը թաղել, իր սիրտը որ կ'ուռէր, կ'ուռէր վիշտով :

Բնագոյով մը՝ զօր չի հասկցաւ, մատանին հանեց ու գրաւ զայն գրպանը՝ թաշկինակի մը ծայրը ծրարելով : Հիմա վստահ էր թէ փորձանք մը պիտի պատահէր իրեն, և ինքը չէր կրնար դիմագրաւել զայն, ու կ'երթար գլխիկսր, և ամէն քայլափոխին գլուխը կը վերցնէր՝ տեսնելու համար պատուհանին առջև գրուած լոյսը դողդոջուն ու լալագին :

Պանդոկին դուռը փոք էր. զարկին անոր ոտքերով : Պառաւ կին մը բացաւ զայն և հարցուց թէ ի՞նչ կ'ուզէին : Կինը հասկըցաւ : Մտան :

Նեղ ու խարխուլ սանդուխէ մը բարձրացան անոնք, հայհոյելով, թքնելով : Պետրոս կը մտէր, և իր սաքերը կը դողային :

Սրահ մը բացուեցաւ, լուսաւորուած լապտերով մը, որուն լոյսը կը մխար : Մերկութիւն մը կը տիրէր հոն, պաղ և տխուր մերկութիւն մը : Լուռ էր ամէն բան : Անձրիւր կը սաստկանար դուրսը, և ապակիները կը ծեծէր :

Պետրոսին ընկերները հրեցին սենեակի մը դուռը : Քանի մը տժգոյն աղչիկներ ելան, անհամարձակ, վարանոտ ու կիսամերկ : Պառաւ կինը առաջնորդեց զանոնք ուրիշ սենեակ մը, ուր քանի մը ցած և ազոտտ անկողիններ կային :

— Հոս աւելի հանգիստ կ'ըլլաք, ըսաւ ան :

Յետոյ, հեռացաւ, և դուռը գոցեց անոնց վրայ :

Պետրոս նստաւ անկողինի մը եզերքը : Կը վախնար ան և իր հոգիին մէջ ցաւազին փոթորիկ մը կար... Անոր ընկերները սկսան պարպել դարեջուրի շիշեր. բոլորն ալ ուրախ էին և այնքան վայրագօրէն ուրախ՝ այդ խեղճ և տժգոյն աղչիկներուն հանդէպ :

Պետրոս հասկցաւ թէ իր ցեղին հրեշտակներն էին անոնք...

Խօսեցաւ անոնցմէ մէկուն հետ կամացուկ, տածկերէնով :

Միջահասակ ու նիհար աղջիկ մըն էր ան, խոշոր ու կապոյտ աչքերով, անուշ նայուածքով մը : Պատառատուն շրջազգեստ մը հագած էր, ու վարսերը ցիրուցան կ'իյնային մերկ ու ճերմակ կուրծքին վրայ :

— Ո՞ւր տեղացի ես, հարցուց անոր :



— Կիրասոնէն բերին զիս: Տաճիկ սպայ մը բերաւ... Քանի մը օր տառաջ փախայ անոր քովէն... Հիմա հոս եմ, ու կը տեսնես...

Ձեռքի տխուր ու սրտաճմլիկ նշանով մը ինքզինքը ցոյց տուաւ:

— Ընկերուհիներդ են անոնք...

— Հոս ճանչցայ, երեքը տեղացի են, միւս երկուքը չեմ գիտեր... Ինծի պէս են ամենքն ալ, խեղճերը...

Կարեկցութեան ժպիտով մը նայեցաւ անոնց: Յետոյ դարձաւ Պետրոսին, և հարցուց անոր:

— Ի՞նչ է անունդ, միւսներուն չես նմանիր դուն...

— Ե՛ս ալ անոնց պէս եմ...

Սուտը զոր կը խօսէր, սիրտը ցաւցուց դժնգակօրէն:

— Լաւ, ի՞նչու կը սպասես...

Եւ սկսաւ շրջագրեատին կոճակները քակել:

Պետրոս բռնեց անոր ձեռքերէն, և արտասուալից աչքերով նայեցաւ աղջկան աչքերուն մէջ, ու ժգին արտայայտութեամբ մը:

— Ինչո՞ւ չես խմեր անոնց հետ, խմէ՛ որ զինովնաս, բայց ո՛չ, զիս շատ կը նեղես այն տանն, գինովները վախ կ'ազդեն ինծի...

— Ես արդէն չեմ ուզեր խմել, մի՛ վախնար...

Բռնած էր միշտ անոր ձեռքը՝ զոր կը սեղմէր իրեններուն մէջ:

— Անոնց անունները չե՞ս գիտեր...

— Գիտեմ, պատասխանեց աղջիկը:

— Քու անունդ ի՞նչ է:

— Հայկանոյշ...

Պետրոս գլուխը ծռեց՝ արցունքները պահելու համար: Անոնցմէ խոշոր և սյրող կաթիլ մը ինկաւ աղջկան ձեռքին վրայ:

— Ի՞նչու համար կուլաս... Ըսէ՛, դուն անոնց չես նմանիր, ըսէ՛, մի՛ լար...

Մեծ գութ մը կար անոր նայուածքին մէջ, մեծ վիշտով մը գեղեցկացած: Շատերը ճանչցած էր հոն, շատերը վայելած էին իր մարմինը, տժգոյն ծագիկ, որուն անուշահոտութիւնը մարած էր արդէն թշուառութեան մէջ... Բայց ո՛չ մէկը լացած էր անոնցմէ, ո՛չ մէկը սպասած էր երկարօրէն, վարանոտ... Բռնեց անոր թեւէն, քաշեց զայն, ու վախնալով անոր ականջն ի վար փսփսաց:

— Ըսէ՛, Հայու կը նմանիս դուն...

Պետրոս չի պատասխանեց: Տխուր ժպիտ մը գծուեցաւ ա-



նոր մաշած դէմքին վրայ: Ընկերները կը խմէին դեռ: Անոնցմէ մէկը սկսած էր երգել կէս մը գինովցած, գարեջուրին գաւաթը վերցնելով օգին մէջ: Ուրիշ մը կը մերկացնէր իր ծունդերուն վրայ նստեցուցած աղջիկ մը որուն կուրծքը կ'երեւար կանթիզին լոյսին մէջ, մարմարի ճերմակութեամբ, կեանքով լեցուն, ուռած, երկու վարդերու կենսայտրդ ծաղկումով մը հայրատ... Աղջիկը թոյլ կուտար ընկու զինուորին ինչ որ ան կ'ուզէր, ցաւագին համակերպումով մը, հանգարտ անպարկեշտութեան մը կեցուածքովը...

Պետրոս գլուխը դարցուց պատին, յետոյ նայեցաւ իր քովը նստած աղջկան, կարեկցօրէն, անհուն ազապատանքով, և փղձկեցաւ.

— Ի՞նչ եղաւ քեզի, կ'ուզե՞ս դուն ալ, անոր պէս, ըսէ՛ քուկդ եմ...

Յետոյ, աւելի անուշ ձայնով մը.

— Դուն անոնց չես նմանիր, ըսէ՛...

Պետրոսը բռնեց անոր ձեռքէն մեռած կարօտով մը, և հարցուց.

— Ուրիշներ չի կա՞ն հոս...

— Կան պատասխանեց աղջիկը, քովի սենեակը ուրիշ մը կայ, կ'ուզե՞ս, կանչե՛մ... Ինծի չի հաւնեցար, հոգ չէ՛...

Աղջիկը գնաց ու վերադարձաւ շուտով:

— Ուրիշի մը հետ է, քիչ վերջը պիտի գայ:

Պետրոսը բան մը չըսաւ, բան մը չի տեսաւ այլևս, աչքերը փոցեց, սպասելով միւսին:

Սենեակին մէջ գարչելի յօնանքի մթնոլորտ մը կար, ճնշոյ, անէծքի մը պէս:

— Ելլ'ր, անա՛ եկաւ...

Պետրոս գլուխը վերցուց ու տեսաւ իր աչքերուն առջև միւսը՝ որուն կը սպասէր գառնակակիծ ու տարտամ նախադգացումով մը:

— Ի՞նչ կ'ուզես ինձմէ, ես արդէն յոգնած եմ...

Չայնը վարանոտ էր, խուսափուկ, վշտի քաղցրութեամբ մը, հողեկան մեղեդիով մը լեցուն: Կը խնդար ան կարծես, անձանօթ համբոյրի մը ժպիտը կար անոր կիսարաց շրթներուն վրայ՝ որոնք շարուած, կարմիր էին վերքերու պէս...

Պետրոս նայեցաւ անոր տխրութեամբ, յետոյ նայուածքը սեւեռաբիր, կարծես թէ ճանչնալու համար զայն, հարցուց անոր.

— Ըսէ՛, դուն ո՞ւրտեղացի ես...



Աղջիկը խնդաց առանց պատասխանելու :

— Ըսէ՛, մի՛ վախնար, թախանձագին շեշտով մը հարցուց նորէն :

— Տրապիզոնցի եմ :

Ա՛լ չի կրցաւ ինքզինքը բռնել Պետրոս, սկսաւ հայերէն խօսիլ շատ կամայ, փախուքով :

Դուրսը անձրեւը կը շարունակուէր, ու գիշերը թանձր ու պզտոր էր, մահուան սարսափին մէջ...

— Ես կ'ըսէի որ դուն չէիր նմաներ անոնց, դարձաւ Հայկանայչը Պետրոսին :

Թուրք զինուոր մը մտայեցաւ անոր, գինով, և աղջկան թեւէն քաշեց, անասնական կատաղանքով մը :

Պետրոս ուզեց փախչիլ սյս անգամ, բայց կարծես բան մը կար հիմա որ անոր սաքերը կը կապէր :

— Ի՞նչ է քու անունդ, որո՞ւն աղջիկին ես դուն... Նստէ՛ հոս, քովս, մի՛ վախնար...

— Անունս Վարդուհի է...

Պետրոս սկսաւ մտածել կսկծագին, յետոյ նայեցաւ աղջկան, նայեցաւ երկարօրէն անոր սև աչքերուն, անոր ցիրուցան մազերուն, անոր կարմիր շրթունքին, անոր հասակին...

— Ինչո՞ւ կը նայիս այդ կերպով, հարցուց աղջիկը, թերեւս կը ճանչնաս ինձի...

Բայց երիտասարդը չի պատասխանեց, ու բռնեց անոր ձեռքէն զայն իր մօտը քաշելով : Երկար ու զօրաւոր նայուածքով մը որ կարծես կը թափանցէր անոր հոգիին, Պետրոս նայեցաւ աղջկան աչքերուն մէջ, յետոյ հարցուց .

— Ըսէ՛, Վարդուհի՞ն ես դուն...

— Ա՛խ... Պետրո՞ս... Պետրո՞ս... Աստուած իմ... Ես չի ճանչնամ քեզի, ա՛խ... Պետրո՞ս... Նիհարցե՛ր ես դուն...

Երկուքն ալ հեծկլտագին ինկան իրարու գրկին մէջ, անհուն ու թշուառ կարօտով մը :

Պետրոս հանեց իր գրպանէն թաշկիւնակը՝ որուն ծայրը ծրարուած էր մատանին :

— Տե՛ս, Վարդուհի, քու տուած մատանիդ, քու կդ ի՞նչ ըրիր... ըսէ՛, ըսէ՛...

Ու բռնած էր անոր ձեռքէն խելայեղ ցուով մը, կը համբուրէր զայն, կը համբուրէր մատները մէկիկ մէկիկ այրող և երկար համբոյրներով, արցունքով կը թրջէր, կը լուար զանոնք :

— Երանի՛ թէ մեռած ըլլայի, քեզի չի տեսնելու համար այստեղ, երանի՛ թէ մեռած ըլլայի...



— Պետրոս... Պետրոս... Մի՛ բարկանար ինձի գէմ...

Երկարօրէն մնացին իրարու գրկին մէջ, երկուքն ալ հեկեկալով բարձրաձայն, իրենց արցունքին մէջ խեղդուած... Յետոյ, երբ իրարմէ բաժնուեցան, Պետրոս նետեց ինքլինքը գետնին վրայ, գլուխը թեւերուն մէջ, ու լացաւ, լացաւ...

Վարդուհին նստած էր անոր քով, կծկուած, առանց խօսելու, առանց լալու, խենթեցածի պէս:

Անձրեւը ապակիները կը ձեծէր, ճրագին լոյսը կը հասնէր սենեակին: մէջ ուր գինսկները պառկած էին իրարու քով:

Պատաւ կիներ կանչեց բոլոր աղջիկները. դուրսը ուրիշներ կային անոնց համար...

— Պիտի՛ չերթաս, պիտի՛ չերթաս, աղաչեց Պետրոս Վարդուհին սեղմելով իր թեւերուն մէջ...

Երկար ժամեր անցան: Թեթեւ ու ճերմակ ստուեր մը ծռեցաւ երիտասարդին վրայ, փափալով:

— Պետրոս, ելի՛ր...

Պետրոս գլուխը վերցուց, ամէն բան երազի պէս կուգար իրեն...

— Ի՞նչ կ'ուզես, Վարդուհի, ի՞նչու չես քնանար...

Յետոյ ինքլինքին եկաւ, նայուածքը պատացուց չորս կողմը, բայց նորէն մտցաւ ամէն բան, գրկեց իր նշանածին գլուխը, առաւ կուրծքին վրայ, անոր մազերը շոյեց, լալով, երջանկութեամբ, և ըսաւ կամացուի, անձրեւին միօրինակ ազմուկէն օրորուած,

— Ես՛ա ուչ է, քնացի՛ր, քնացի՛ր... հոգի՛ս...

Ճրագին լոյսը հատաւ, սենեակը լեցուեցաւ խաւարով՝ որուն մէջ միայն այրող պատրոյգին ծայրը կ'երեւար, արեւնի պէս կարմիր... :  
ԱՐՍԷՆ-ԵՐԿԱԹ

## ԱՐՈՒԵՍՏԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԵՐԱԶՍԸ

Վանտաշներու շրջանէն առկին, արուեստն այն աստիճան նախեսուած, արհամարուած, խոշտանգուած չէր, որքան ներկայ պատերազմին ընթացքին: Ամենուն յիշողութեան մէջն է առկաւին այն վայրագ կատաղութիւնը զոր արուեստի հրաշալիքներուն գէմ ի գործ դրաւ՝ աղգերու ամենէն քաղաքակիրթն ըլլալ յաւակնող Գերմանիան: Լուվէնի, Թէրմօնաի, Իփրի, Ռէնաի և ուրիշ քաղաքներու յիշատակարաններուն կործանումն արգարացուեցաւ, սրտի անհուն թեթեւութեամբ մը, աւերիչներուն կողմէ: Զինուո-



282-16



րական անհրաժեշտ պէտք մըն էր, ըսին անոնք, Ռէնսի անգու-  
գահան տաճարին ուժակոծումը: Փարիզ գործուելիք նախճիրնե-  
րուն հասնելէ առաջ, իրենց համար պէ՛տք մըն էր, անշուշտ,  
Ֆրանսայի գեղարուեստական փառքերէն մին հիմնայտակ կոր-  
ծանելը. պէ՛տք մըն էր նաև Պելճիքայի հերոսական ստաննե-  
րուն եկեղեցիները, շուկաներն ու քաղաքատունները քանդելը.  
պէ՛տք մըն էր, վերջապէս, յաւիտենականօրէն ննջողներու դամ-  
բանները սրբապղծելը...

Գերման ամբարտաւան զինուորականութեան շնորհիւ, սա-  
կայն, բոլոր այդ պէտքերն անջնջելի արատ մը թողուցին կէօ-  
թէներու, Պէթհօֆներու, Վալկնէրներու հայրենիքին ճակատին  
վրայ զոր իր հպարտութեան մէջ վերաւոր Ֆրանսան սկսեր էր  
յարգել՝ հակառակ եօթամասունական թուականներուն իր կրած  
անագորոյն դառնութիւններուն: Նոր սերունդը գրեթէ մոռցեր էր  
բրուսիական սողաւարտին Ֆրանսայի կուշտին վրայ բացած խո-  
ցը: Տէրուլէաները, Պառէսները ու Ռլօմշին բոլոր յամառ եր-  
գիչներն ու առաքեալները չափազանց եռանդոտ հայրենասէրներ  
կը համարուէին, մինչ օրուան նորոյթն էր գերման մտածումին  
հետեւիլ, գերման մշակոյթը փառաբանել: Այդ սերունդին ամե-  
նէն կարկառուն գէմքերէն մին, Ռօմէն Ռօլլան, Ֆրանքօ-գերման  
հաշտութեան ու եղբայրութեան տաղանդաւոր ջատագովը կը  
հանդիսանար մէկէ աւելի զմայելի գլուխ-գործոցներու մէջ: Սոսկ  
գրագէտը կամ արուեստագէտը չէր որ գրացի երկու ազգերուն  
միջև կ'ուզէր հաստատուած տեսնել ներդաշնակութիւնը, այլ  
պետական մարդեր, զանազան առիթներով, նոյն իզձը կը յայտ-  
նէին երկուստեք:

Բայց, դժբախտաբար, բոլոր այդ տեսլապաշաները չէին հաշ-  
ուի առեր գերման կործանարար զինուորականութիւնը, իր դա-  
ւանիւթ ու դժոխային գիւտերն ու սաղբանքները... Եւ երբ,  
այլևս զէնքին կը յանձնուէր Եւրոպայի ճակատագիրը անօրինե-  
լու գերը, չքմեղանքի բուռն արտայայտութիւններն ու բողոքի  
հանգիստաւոր ցոյցերը թնդանօթներու գոռում-գոչումին մէջ կը  
խեղդուէին: Տարիներէ ի վեր մարդկութեան գլխուն վերև ճօ-  
ճացող գերման սուրն ահա՛ կը դործէր, ոչ միայն զարհուրելի  
սպանդանոցի մը վերածելու համար Եւրոպայի զմրխտագոյն հը-  
րաշալի դաշտերը, այլ նաև, այլ մանաւանդ, մոխիր և աւերակ  
սիւսելու բազմաճօխ ոստաններու մէջ:

Գերման մոլուցքին բիւրաւոր զոհերէն մին, կարեւորագոյնը,  
Ռէնսի հոյակապ Մայր-Նիկեղեցին պիտի ըլլար. Ժ.Գ. ըդ դարու այդ  
հրաշակերտը, որուն սրբատաշ քարերը տեսեր էին՝ հարիւրաւոր



տարիներու ընթացքին՝ Ֆրանսայի վեհապետներուն թագադրութեան փառահեղ հանդիսութիւնները, և որուն երկնասլաց կամարներուն տակ թրթռացեր էր ամբողջ Ֆրանսայի հագին, քանի մը ժամուան մէջ կը վերածուէր ծխաշունչ աւերակոյտի մը: Ասդին, Վենետիկ մէջ, Թիէֆոլօի գլուխ-գործոցներէն մին էր որ կը չքանար, սնրապարտ Տելտոններու մեղսակիցներուն՝ Աւրատրիացոց արձակած ուժերուն շնորհիւ: Փոխվրէժի (?) համար, կը փաստէին դահիճները, պիտի չի խնայուէին լատին քաղաքակրթութեան ստեղծագործած բոլոր յիշատակարանները, եթէ պէտք ըլլար...:

Արուեստի հրաշալիքներուն հանդէպ աւտորո-գերման այս ճիւղալիքի վարուելակերպը խանդավառութեամբ պիտի որդեգրուէր մեր սխերիմ թշնամիներուն՝ Թուրքերուն կողմէ: Արդէն, այս վերջիններուն համար գաղտնիք մը չէր գերման զինուորականութեան քանդակու նոր մեթոտը. Թուրքերը գայն կիրարկած էին անյիշատակ ժամանակներէ ի վեր, իրենց տիրապետութեան ենթարկուած բոլոր երկիրներուն մէջ. ուստի ջարդերու, խմբական աքսորի և դեռ ուրիշ կարգի արհաւիրքներու կցեցին հայ քաղաքակրթութիւնը պանծացնող յիշատակարաններու կործանման սճիրը:

Մեզ համար դժուար է այսօր որչապէս ճանչնալ մեր կրած վնասին տարածութիւնը: Մեր գարաւոր յիշակերտները չունին անչուշտ իրենց եւրոպայի բախտակիցներուն գեղարուեստական արժէքը, և սակայն անոնք իրենց պատկառելի հնութեամբ կոչուած էին պատմական ժողովուրդի մը անցեալին մասին վկայել: Եթէ եւրոպացին իրաւունք ունի մտածելու որ պատերազմէն յետոյ պիտի կարենայ վերանորոգել կամ նայնութեամբ վերականգնել իր յիշակերտները, — քանի որ անոնց պատկերները, ամենայնպէս մանրամասնութեամբ, պահուած կը մնան պետական գիւտնատուններու մէջ, — մենք ստիպուած ենք, աւագ, խսպառ անյայտացած նկատել մեր նախնիքներուն կանգնած արուեստի թանկագին կոթողները:

ԿԱՐՕ ՊԱՒԵԱՆ

## „Թ Ի Փ Փ Ը Ր Է Ր Ի“

(Ն Ո Ր Ա Վ Է Պ)

Հայրենի վերջին աղէտները վրդովեցին Նազարեան եկրպատահայ ընտանիքին միօրինակ խաղաղութիւնը:

Էրիկ-վնիկ նկարազրի ու խառնուածքի տեսլական ներդաշնակութիւն մը ձեւացուցած չէին արդէն: Բայց Չուկաս Նազարեան, բարեհամբոյր մարդ, կարելին ըրած էր միշտ յարմարելու



համար իր շնորհալի կողակցին, համակերպելով անոր արտակեզ-  
րոն հակումներուն... է՛հ, գիւրլի՞ն բուն էր Պոլսէն կին առնել,  
ա՛ն ալ Բանկալթիէն... Գաւառացի պարզուկ ու պատուական ար-  
հեստաւորը պարտաւոր զգացած էր իր «լաւագոյն կէսին» հանդէպ  
պատրաստակամ զիջումներու, և ամուսնական երկար կենակցու-  
թեան մը ընթացքին վարժութիւն, գրեթէ բնութիւն դարձած էր  
իրեն խուսափիլ անհամաձայնութեան ու վէճի առիթներէն:

ԾԹի փոթորկին մէջէն ընտանեօք Եղիպտոս նետուած, Նա-  
զարեան յաջողեր էր Աղեքսանդրիոյ մէջ վերաբանալ արեւելեան  
մետաքսառէջ գործուած քներու իր խանութը: Սկզբնական խաւ-  
խափուժի կարճ շրջանէ մը ետքը, Ղուկաս դարձեա՛լ վաստակը  
տեղը շուկայիկն եղեր էր որ իր տան սեռէն զբեկանքին ստքը  
կտրելէ, իր կնոջ արդուզարդի ու այլ պահանջկատութիւնները  
քիչ-շատ գոհացնելէ, իր մէկ հատիկ զաւկին՝ Նուարգին դպրո-  
ցական ծախքերը հոգալէ զատ, ատենը մէյ մը կտիկի գումարներ  
ալ կրցեր էր զրկել Տիգրանակերտ, իր ծերունի՛ ծնողացը և բազ-  
մանդամ գերդաստանին:

Վրսփորը չէր մոռցուցեր իրեն բոլոր սիրելիները զոր ետին  
թողուցած էր մատաղ տարիքին պանդխտելով. Նեղոսն ալ պիտի  
չի մարէր իր ներսիգին հայրենի օժտին նուիրական կայծը: Ղու-  
արգէթի ճամբուն վրայ արդէն կքիլ սկսած, Ղուկաս հաւատա-  
րիմ կը մնար իր ծննդավայրին, և անոր կարօտովը կը մնար ա-  
ռանձին: Տարեկը, իր խանութը հանդիպող բարեկամներու հետ  
ուրիշ խօսք չունէր: Անձկանքով կը սպասէր եգիպտահայ լրա-  
գիրներուն, և եթէ գլուխ քերելու իսկ ժամանակ չունենար, ան  
չէր վերսկսի արշափանքը, առանց մէյ մը աչքէ անցնելու իր  
«Յուսարեր»ը կամ «Արեւ»ը, որոնց մէջ կը մխրձուէր իրիկուն  
իր հանգիստի ժամերուն ալ: Բարի խապրիկներ երբեմն ժպիտ մը  
կը բերէին իր դէմքին վրայ, դժբաղդ լուրերը արտմութեամբ  
կը լեցնէին իր աչքերը, ու Ղուկաս, թերթը վար դնելով, մեղձ,  
վեհերոտ հառաչանք մը կ'արձակէր, զգուշանալով խանգարել ի-  
րեններուն հոգեկան մխպազազ ալլուրութիւնը: Վիշափն մէջ մի-  
նակ մնալու վարժուած, Ղուկաս չէր ջանար ցաւակիցներ փնտը-  
ռելու ընտանեկան իր բոյնին մէջ, ու ներքնապէս դժգոհ ալ չէր  
որ իր կինն ու աղջիկը իրմէ տարբեր զգային ու զերծ մնային  
իր յարատե սրտմաշուքէն:

Բայց հայկական նորագոյն արհաւիրքները մարդուն ըզկը  
ցնցեր, էութիւնն ալէկոծեր էին օր մը, և սկսեր էր տառապիլ  
տեսնելով որ գէթ իր կինը չի բաժներ իր կրած սուր կսկծանքը:

— Տիգրանակերտը դարկե՛ր են, Արտէ՛մ, բսեր էր անոր ի-  
րիկուն մը, յուզումէն դողդոցող ձայնով մը, բոլոր էրիկմոր-  
զիկը սուրէ անցուցեր, մնացածներն ալ քչեր են դէպի անապատ...

— Է՛յ, ի՞նչ բնեմ, պատասխաներ էր Արտէ՛մ, Աստուած Պոլսե-  
ցիներուն ողորմի՛ սէ անոնց գլխուն փորձանք մը չի գայ... Գաւա-  
ռացիները սորված են ջարդիլ, զուլումի, տառապանքի... Արդեօք



ինչ վիճակի մէջ են Բանկալիսի բայրս, ազգականներս ..

— Աղէ՛կ խղճմտանք, շխտա՛կը, կնի՛կ, անանկ է ես, Տիգրանակերտի իմ ծեր մայրս, հայրս, եղբայրներս ու քոյրերս, իրենց զաւկներովը, կրնան մտթուել, ինչու չէ... Անոնց բուրբին հոգին Բանկալիսիցի մը նիյերը կ'արժէ՞, կրնա՞յ արժեւ...

Ու Ղուկաս ա՛լ հայրենի ճգնաժամին մասին ո՛չ մէկ բառ արտասաներ էր իր կնոջ առջև :

Տ

Կիրակիները, Տիգին Արաէմ, իր աղջկան հետ, իրիկուան դէմ, պառայտի կ'իւլէր Աղեքսանդրիոյ Նոր Քարափին վրայ, մինչ ամուսինը Ապու-Տարտարի կամ Աթթարինի սրճարանները կ'երթար հայրենակիցներու առջև թափելու շարաթուան մը լուսթեան ժանգը :

Հակառակ իր խնամո՛ր ծագումին, Արաէմ դագրած չէր ունայնատօրէն փայփայլէ իր կենցաղին միջակութենէն օր մը դուրս գալու երազը : Ասոր համար ինքզինքին չէր ապաւիներ, անշուշտ, այլ ամբողջ յորը դրած էր Նուարդին գեղեցկութեանը վրայ, անոր բաղէն ակնկալելով ինչ որ Պալիսը, Բերան, Բանկալիսին զլացեր էին իր աղուսը աղջկնութեանը : Եգիպտոսը ժըլտա եղնի էր երբէք գեղունիներուն, զոյգ մը սև աչք, բարեձև հասակ մը, գիրգ մարմին մը ո՛ւր չէին կրնար հասցնել խելքը-գլուխը պարմանուհին անպատեաներու, հեշտասէրներու, ռասքաներու այս օրհնեալ երկրին մէջ : Կը բաւէր որ քիչ մը չորսդիգ նայիլ գիտնայիր, մանաւանդ ազգակիցներուդ անմիջական համեստ շրջանակէն դուրս փնտռէիր երջանկութեան պատահական ժպտաները : Նուարդ Չուրի պէս արարերէն ու Ֆրանսերէն կը խօսէր, և հիմա՝ մօրը ստիպման տակ՝ անգլիերէնին ուժ կուտար... Պատագաններն ասանկ կը պահանջէին : Պատերազմին պայթումէն քիչ յետոյ, Եգիպտոս հասեր էին Միծն-Ֆրիտանիոյ հեռուսը տիրոջթներէն անհամար խարտեաչ ու առսյգ կտրիճներ, որոնք Մայր-Հայրենիքին համար իրենց արիւնը թափելու երթալէ առաջ՝ եգիպտական ոստաններու սալարկին վրայ կը թափէին իրենց գըրպաններուն սեկին, աւելորդ բեռէ մը թեթեւալու աճապարանքովը : Քաղքենի ծակաչքութիւնը, խանութպան բնշաքաղցութիւնը չէին տեսեր երբէք իրենց պաշտած նիւթին հանդէպ այսպիսի ապերասան արհամարհանք մը : Քանի՛ խղճմտանքներու գօտինները թուլցեր, ո՛րքան բարոյականներ կ'թոտեր էին, ու ամենքը փողոց ինկեր իրենց բաժինը կ'որոնէին անակնկալ մատաղէն... Ու աւանդալիպային գրոյցներ սկսեր էին շրջել բերնէ բերան. միլիոնատէրերու ազաքներ կային Աւստրալիոյ ու Նոր-Զելանդիոյ այդ առաջին կամաւորներուն մէջ, որոնք հանդիպած սիրուն տեղացուհիին հետ կը սիրահարուէին, կը նշանուէին, ու նուէրներով, յեկերով ու անլուր բարիքներով կ'ողողէին իրենց ընտրած հարսնցուն ու անոր տունը...

Արաէմ չէր ուզեր փախչնել իր աղջկան ներկայացող առաջին առիթը : Արկածախնդրական բնդհանուր տենդէն բռնուած, Աղեքսանդրիոյ Նոր Քարափին կիրակնօրեայ անսովոր եռուզեռ ին



մէջ — ուր համազգեստներու խաբին կը տիրապետէր — իր անձկոտ ուշադրութեանն չէր վրիպած անձանօթին կայտայտ նայուածքը որ քովնախ կուգար շայն Նուարդին թուխ գանգուր վարսերը և վերջալուսային հորիզոնի մը շառագոյն խորքին վրայ արտագծուող անոր հմայիչ կիսադէմքը:

— Նայէ՛, ազջիկս, նայէ՛, ի՛նչ շնորհքով երիտասարդ մըն է, Բամլէի կայարանէն ասդին կը հետեւի կոր մեզի, աչքը վրայ մնացեր է, երեսդ մի՛ կախեր, ազջիկս, խնդում ձեւ մը առ, նայէ՛, ազջիկս...

Ու Նուարդ, վարանտա, անտեղունակ ու տարտամօրէն բրնձնադրօսիկ արտալուստութեամբ մը, կը համարձակէր դառնալ թօմիին, որ անմիջապէս կը բարեւէր զինք, ժպտագին, այլ խորհրդապահ ձեւով մը:

Պրանտական Հիւպատոսարանին մօտ, Քարափին երկայնքէն շեղելով, մայր ու ազջիկ կը մտնէին Մաճէսթիք Պանդոկին առջև գտնուող հասարակաց պարտէզը, հոն նստարանի մը վրայ պահ մը հանդիշու համար: Այդ միջոցին, թօմին քաղաքավարութեամբ իրենց կը մօտենար և թուլտուութիւն կը խնդրէր միևնոյն նշտարանին մէկ ծայրը գրասեղու, և դիւրահաղորդ ընտանութեամբ մը որ յատուկ է Աւստրալիոյ քաջարի զաւկներուն, խօսակցութեան կը բռնուէր Նուարդին հետ:

Կէս ժամ վերջը, գեռատի Հայուհին, կէս-Ֆրանսերէն, կէս-անգլիերէն պատասխաններովը, գրտած, գերած էր երիտասարդ Աւստրալիացիին սիրտը:

### §

Աբազմ լսեցուցեր էր իր էրկան ազգասիրական նախանձախնդրութիւններն ալ, և անոր հարկադրեր էր իր մէկ հատիկ զուլան օտարին տալու յանձնառութիւնը:

— Օտար մի, պոսացեր էր անոր երևոյն, օտար սրն է... Այս նիւլան ազաքները մեզի պաշտպանելու, մեզի ազատելու, մեզի համար արիւննին տալու չի՞ն հկեր... Օտար մի... Քուկին ո՞ր Հայդ եգիպտոսէն կ'ելլայ կ'երթայ կոր Տաճիկին գէմ կուռելու, ո՞ր փեսացուդ ասոնց անձնութիւնը ցոյց կուտայ կոր, ըսէ՛ նայիմ... Ասո՛նք են որ պիտի փրկեն մեր Պոլսեցի՛ն ալ, Գաւառացի՛ն ալ... Օտար մի...

Ղուկաս սահմոկեր, պապանձեր էր այս անողոք տրամարանութեան առջև, ու գուցէ առաջին անգամ ըլլալով կնկանը խօսքն անմիճելիօրէն շխտակ թուեր էր իրեն:

— Հե՛մ ի՛նչ բազդ, աւելցուցեր էր Արտէմ, ի՛նչ բարբի, միտքդ բեր անգամ մը, Մէլպուրնի ամենէն հարուստ վաճառականներէն մէկուն հետ խնամի պիտի ըլլաս, քիթիդ չի՞ս տանիր կոր, խելքդ տուն կանչէ՛... Գլխադիրին մէկ աղօթք մը ունիմ, ձեռքը անպակաս ընէ ձիմիին վրայէն Տէ վտանգի մը չի հանդիպի տղան... Շարաթէ մը կը մեկնի կոր Տարտանէլ...

Նուարդին նշանուքը կատարուած իրողութիւն մըն էր: Զիմ Գարլթըն գրեթէ օրընդմէջ կ'այցելէր Նազարեան յարկը, ամէն անգամ նուէրներ տանելով իր խօսեցեալին: Իրիկունները, Ղու-



կաս առանձին կը մնար ընթրիքի սեղանին առջև. Արտէմ ու Նուարդ միշտ կառքով պտոյտի հրաւիրուած կ'ըլլային Ճիմիէն Ծովեգերեայ գարեջրատուն մը ճաշելէ ետքն ալ՝ Բիւրսալ, Պէլլիւ կամ ո՛ւէ Սիմեմա մը անպատճառ: Ուշ գիշերին, Ղուկաս կը ստիպուէր՝ կէս-քուն կէս-արթուն՝ ելլել դուռը բանալ: Ճիմի, տոնիկ նեկրլմենի մը բարեկրթութեամբը, իր ապագայ աներոջ որպիսութիւնը կը հարցնէր, ու իր սրտաց ու հուժկու ծիծաղովը պահ մը տունը լեցնելով, առանց աւելի յամենալու, հրաժեշտ կ'առնէր Նուարեաններէն՝ պանդոկ կամ բանակետը երթալ գիշերելու համար:

Հեռասպառ ուրախութեան ու խօլ իրարանցումի այս շրջանը երկար պիտի չի տևէր: Աւստրալիական առաջին զօրախումբերն անյապաղ դէպի Տարտանէլ պիտի մեկնէին: Անոնցմով Պոլսոյ նըւաճումին հաւատքը կ'ողեւորէր ամենքը: Արտէմ չէր թերացեր Ճիմիի յուշատետրին մէջ Նուարդին ձեռքով գրել տալու Բանկալթիի իր քրոջ հասցէն, և քանիցս թախանձագին յանձնարարեր էր անոր՝ Պոլիս հասնելուն՝ այցելել իրեններուն: Ու անկեղծ յուզումի արցունքներով էր որ, մայր ու ազլիկ, Ադեքանդրիոյ քարտփէն, իրիկուն մը, յառեցան այն փոխադրանաւին, որ Ճիմին ու իր ամերի ընկերները կը տանէր դէպի արեւելեան ուղմանակատը: Արտէմ ու Նուարդ իրենց արտատուածքը թաշկինակները ճօճեցին, երկարօրէն, սիրելի մեկնողին ետեւէն, մինչ փոխադրանաւին վրայէն հարիւրաւոր առօրէ լանջքերէ բարձրացող ձայներ կը համերդէին:

« Եկա՛ր Է նամբան,  
« Իեպի Թիփփրեքի » ...

\* \* \*

Երկու շաբաթ հազիւ անցած, Ճիմիի առաջին նամակը կը հասնէր, սիրազիզ այլ տարտամ խօսքերով հիւսուած: Ճիմին կը գրէր իր Նուարդին թէ ամէն անգամ մինակ գտնուած ատեն իր լուսանկարը ծոցէն կը հանէր ու զայն համբուրելով կը զօրանար, կը գօտեպնդուէր: Երկրորդ նամակի մը մէջ, աւելի միտալի շեշտով մը, Ճիմին կ'ըսէր. « Բոլոր տանջուած հայ քոյրերուդ ու եղբայրներուդ վրէժը պիտի լուծե՛մ, իմ անուշիկ Նուարդս » ... Բայց երրորդ նամակը տարապայմանօրէն կ'ուշանար: Արտէմ երբէք այնքան շահագրգռուած չէր պատերազմին իրադարձութիւններովը՝ որքան Ճիմիին մեկնումէն ի վեր: Ղուկաս մինակ չէր հիմա իր լրագիրներուն ընթերցումին մէջ: Տան սեռէն ներս մանկուն պէս՝ Արտէմ կը ցցուէր իր առջև, անհամբեր.

— « Յուսարեր » ր բերի՛ր ... « Արեւ » ք ելա՛ւ ... Ի՞նչ լուր կայ Տարտանէլէն ...

Առտունները, յաճախ, Ապու-Տարտար կը շտապէր, ազլկանը հետ, Սուրբ Պօղոս-Պետրոսին մոմ մը վառելու, և Գլխադիրին պազապուռն որ ձեռքը չի քաշէ Ճիմիին վրայէն:

Ի գո՛ւր: Անձկագին ակնկալուած նամակը չէր դար, և տարտանէլեան խապրիկներն ալ հեռզհեռէ աւելի շփոթ ու վրդովիչ կը դառնային:

Երկու ամիս էր որ այս հոգեմաշ անստուգութեան ու շարա-



չար հնչնուքին մէջ կ'ապրէին Նազարեանները: Օր մը, երբ մայր ու աղջիկ միասին նստած, իրենց լուռ թախիծը կը միային, դուռը զարնուեցաւ: Արտէմ վազեց բանալու: Աւտարալիացի զինուոր մըն էր որ նամակ մը յանձնեց իրեն ու հեռացաւ:

Արտէմին սիրտը դահավիժօրէն զարնել սկսաւ: Ի՞նչ կար արդեօք այդ նամակին մէջ, սե գո՞յժ մը թէ բարի լուր մը... Հետաքրքրութիւնը, վախէն աւելի զօրաւոր, զինք նոյնհետայն ստիպեց աղջկանը չի խնայելու դաժան անակնկալի մը ցնցումը:

— Նուարդ, զաւակս, սիրտդ թունտ չելլէ... Նամակ մըն է... Նայե՛ ի՞նչ կայ մէջը ...

Նուարդ աժգունեցաւ, պատի դոյն առաւ, ու գոզողուն մատներով բանալով նամակը, կարգաց, սեւեռաբիր.

«Սիրելիս,

«Ամիսէ մը իվեր Սան-Ստէֆանօի զինուորական հիւանդանոցն եմ: Կրկնակ գործողութիւններու ենթարկուեցայ: Հիմա «ապաքինման ճամբուն մէջ եմ... Պիտի ուզէ՞ր ձիմիդ տեսնել «կազ ու թևատ... Մտ օրէն հայրենիք պիտի մեկնիմ...

«ՃԻՄ ԳՆՐԼԹՐՆ»:

— Երթա՞նք, մայրի՛կ, եղաւ Նուարդին սրտաբուղիս ճիչը, երթա՞նք, ձիմի՛ն է, զարնուե՞ր է, Սան-Ստէֆանօի Հիւանդանոցն է, երթա՞նք, մայրի՛կ, շուտով...  
Ու գացին:

Ձիմին մէկ թեւով միայն կրցաւ փարիլ Նուարդին, ու զայն սեղմել իր կուրծքին վրայ:

Թշնամիին երկաթակրակը փառաւոր ու առնական տգեղութեամբ մը գեղեցկացուցեր էր անոր երէկուան խարտեաչ ու վարդազոյն դէմքը: Իր կապոյտ աչքերը պահեր էին սաղայն իրենց մանկական ժպտուն պայծառութիւնը:

— Տե՛ս, ի՞նչ եղայ, սարլի՛նկ, կ'ուզե՞ս ինձի այսպէս...

— Քո՛ւկդ եմ, ձիմի՛, հծծեց մատաղ Հայունհին, գուն աւելի՛ աղուոր ես հիմա ...


Ու շարաթ մը վերջը, ուրիշ շոգինաւ մը, Աղեքսանգրիոյ նաւահանգիստէն խարխիսը վերցնելով, դէպի Աւտարալիս նէր կը տանէր Արտէմն ու Նուարդը: Կաթօգին գուրգու ձիմին շրջապատած, անոնք կամրջակին վրայէն մնաս-բարովի նըշաններ կ'ընէին Ղուկաս Նազարեանին, որ ամէն բանի համակերպած մարդու կերպարանքով մը իր թաշկինակը կը ճօճէր: Ղուկաս հաւաններ էր երկու ամիս մինակ մնալ, մինչև որ իր կինը Նուարդին հարսնիքին ներկայ ըլլալէ հօքը, Մէլպուրնէն վերադառնար:

Շոգինաւին վրայ ռազմադաշտերէ հաշմանդամ վերադարձած ուրիշ երիտասարդ Աւտարալիացիներ ալ կային: Ու մեկնումի պահուն, այդ հերոսները, անպարտելի հաւատքի թափէ մը կարծես ոգևորուած, կը յանկերգէին.

« Երկա՛ր ե նամբան

« Դեպի Թիփփրեքի՛... »:

ՍՈՒՐԷՆ ՊԱՐԹԵՆԱՆ





# ԾԱՆՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ

---

Կողմի երեսներուն վրայ իրենց ծանուցումն ունենալ փափաքողներէն կր խնդրուի դիմել մեզի, պայմաններուն մասին համաձայնելու համար:

---

Ս. դ ե ֆ ա ն դ ր ի յ յ Մ է ջ

Ս. դ ե ֆ ա ն դ ր ի յ յ « Ա. Ն. Ս. Ս. Ս. Ն ՅՈՒՇԱՐՉՍՆԸ » ին  
րաժանորդագրուի կամ ձեռքէ ստանալ փափաքողները  
դիմել Պ. Փ. ԲԱԳՐՍՏՈՒՆԻ:



# ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«ԱՆԱՊԱՏԻՆ ՅՈՒՇԱՐՉԱՆԸ» փոսթի միջոցաւ ստացող-  
ներուն համար բացուած է բաժանորդագրութիւն մը հետեւ-  
եալ կերպով.

Իւրաքանչիւր հասրին (բաղկացած 10 տետրէ, իւրաքան-  
չիւրք 24 մեծագիր երեսներէ) բաժնեգինն է 20 դր. ողջ :

Գինել հեղինակին՝ հետեւեալ հասցեով .

**S. BARTÉVIAN**

B. P. N<sup>o</sup> 1500

Le Caire

Գին իւրաքանչիւր տետրի

2 ՂՐՇ. ՈՂՋ

ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԷՆ

- 1.— ՔԱՅՔԱՅՈՒՄ (Սպառած)
- 2.— ԿԻՒԿԵԱՆ ԱՐՀԱԻԻՐՔԸ (Սպառած)
- 3.— ՀԱՅՈՒՂԻՆ (Սպառած)
- 4.— ԱՐԻՆԻՆ ՄԱՏԵԱՆԸ
- 5.— ՉԱՅՆԸ ՀՆՉԵՅ !
- 6.— ԵԳԻՊՏԱԶԱՅ ՏԱՐԵՅՈՅՅԸ, Ա. Հասր (1914)
- 7.— » » Բ. Հասր (1915)
- 8.— » » Գ. Հասր (1916)
- 9.— «ՀՈՍԱՆՔ»Ի ՀԱՌՔԱՆՈՒՆ















